Պարույր Սևակ

Անլռելի զանգակատուն

9

ՂՈՂԱՆՋ ՎԵՐԱԾՆՄԱՆ

Ա՛խ, Վարդապե՛տ,
Մեռած դանդաղ,
Մեռած թեպետ,
Բայց և անթաղ,
Բայց և անփուտ մեր սրբություն.
Կարելի էր յաթաղանով,
Ջարդով,
Խարտով,
Դավով - անդավ
Բնաջնջել մի ո՛ղջ անտառ,-
Անմարդկային մի լրբությո՛ւն,-
Եվ այդ մտքից զարհուրելի
Չխենթանալ չէ՛ր կարելի:
Սակայն չարի խոփը դիպավ ժեռ քարերի,
Եվ ժանգոտած խոփը նրա չդիմացավ:
Դու՝ Փարիզյան Վիլ-Ժուիֆում,
Այդ չիմացար...

Դու չիմացար, որ աշխարհով
Կայծակեցին ահեղ շանթեր,
Եվ ազգը քո որբ ու անտեր,
Բզի՛կ-բզի՛կ,
Ծվա՛տ-ծվա՛տ,
Լքված աստծուց և մարդկանցից,
Զրկված անգամ հուսո գանձից,
Ի դեմս ամեն բարեկամի
Լոկ տեսնելով ծախու կավատ,
Մինչև մրուր դատարկելով
Վհատության գավ ու գավաթ,-
Նույն ազգը քո հանկարծ-մեկեն
Վերստացավ նոր մի հավատ.
Հոգեվարքի իր մահիճում
Հոգեդարձը վերածնվեց,
Մի նոր կյանքի հույսով գինվեց...
Իմ ժողովո՛ւրդ հնամենի,
Ինչպե՞ս գտնել դեռ չստեղծված
Բառն այն, որով հնար լինի
Քեզ ճշտորեն անվանելու:
Դու՝
Պատմության մութ առեղծված,
Դու՝
Մարդկության բարդ հանելուկ,
Տեղն ու տեղդ՝ զարմանալի...
Քեզ որտեղի՞ց այն բանալին,
Որով կյանքի դուռն ես բացել,
Այն դարավոր
Հաստ դուռը, որ
Ճակատի դեմ քո լուսավոր

Փակվել է միշտ, շրխկացել:
Քեզ դարեդար հալածելով,
Խուժդուժորեն սրածելով՝
Սպանեցին,
Խաչ հանեցին,
Սակայն մնաց դեռ հայությունն.
Առանք կրկին մենք հարություն,
Եվ ո՛չ իբրև մի նոր Հիսուս,
Այլ... հայի՛ պես:
Դարեր ի վեր վառում են մեզ,
Այրում են մեզ,
Դարձնում մոխիր
Հնոցի մեջ խուլ չարության,
Խարույկի մեջ քեն ու ոխի,
Ու տաք մոխիրն անգամ թրջո՛ւմ...
Սակայն ոգին մեր հայության
Թե այրվեց էլ, ո՛չ, չի՛ կորչում.
Ելք է ճարում նո՛ր հարության,
Եվ... ո՛չ որպես փյունիկ թըռչուն,
Այլ... հայի՛ պես...
Սակայն ոգին մեր հայության
Ավելի ճիշտ՝ չի՛ մոխրանում,-
Միևնույնն է, թե չարության
Հուրը թեժ է կամ մարմանդ է.
Չի մոխրանում,
Այլ ճախր անում,
Սավառնում է ոգին հայի,
Եվ... ո՛չ իբրև հեքիաթային
Կախարդական սալամանդրը,
Այլ... ի՛ր նման՝

Հայ ոգո՛ւ պես...
Դիակներով ձորն է լցվում,
Դիակներով վիհն է խցվում,
Արյուն հագնում սարավանդը...
Հարվածում են մեզ մահացու,
Վերքի վրա նոր վերք բացում...
Զարդեր հայտնի, դավեր ծածուկ,
Կործանումներ գունակ-գունակ...
Դժխեմ բախտի մատյանի մեջ
Սպառումի հազա՛ր այունակ...
Իսկ մենք՝ տոկուն ու կենսունակ,
Ինչի՞ նման,- դե եկ ասա...
Իսկ մենք՝ տոկուն ու կենսունակ
Հենց... որպես հա՛յ,
Հենց... որպես հայ...
Արցունքն՝ աչքին,
Վերքը՝ կրծքին,
Պատա՛ռ-պատա՛ռ, ծվատ թեպետ,
Քո ժողովուրդը, Վարդապե՛տ,
Զնդանումիդ քսան տարում
Զանաց ասել մնաս բարև
Ամեն բանտի ու զնդանի,
Մտավ հզոր մի ընտանիք,
Ուր հույսը նույն
Դարձել էր այուն,
Նույն երազը՝ ծածկող տանիք...
Մեր կեղեքման ու մեր տանջման,
Մեր վերահաս բնաջնջման
Ահեղ մտքից ցնորվելով,
Դու չիմացար, որ հորվելով՝

Հանձնվելով խավար հողին,
Չփտեցինք մենք հողի տակ.
Այլ վազի պես մեր խաղողի,
Երբ որ հասավ գարունը տաք,
Հողի մեջ էլ մեզ ուղղեցինք,
Գարնան շնչով ընձյուղեցինք
Ու կանգնեցինք՝ նորի՛ց շիտակ,
Իսկ գարո՞ւն էր,
Ի՞նչ գարուն էր...
Եվ դարավոր մեր արյունը
Պատանորեն տաք պղպջաց,
Հին ավիշը, նոր ավյունը
Կրկին եռաց մեր բնի մեջ,
Անցավ ջարդված ճյուղքի միջով,-
Ու մեր ծերուկ հոգին ճչաց
Նորածինի զնգուն ճիչով:
Չլիացանք փրկված քիչով.
Թե պաղ էինք, շուտ հալվեցինք
Ու շատացա՞նք, ծավալվեցի՞նք,
Եվ ուր կուզես՝ հայ մի անուն,
Որ մեր պատիվն է պահպանում,
Մեր մեծությունն է վեր հանում,
Դռներ բանում պանծացումի,
Հեռու տանում համբավը մեր...
Երեկ դեռ որբ ու սովագար՝
Մենք շողացինք անբավ գանձով.
Ծովից զրկված, մի ազգ անծով՝
Եվ տվեցինք մենք... ծովակալ...
Արդեն վաղուց, վաղո՛ւց թեպետ
Կորցրած զորք, սպարապետ,

Ոտնահարված՝ բանակներից,
Ապրած գրոհ, ջարդ ու արշավ,
Եվ... քո ավեր տնակներից
Ծնունդ առան բյուր զորապետ,
Գեներալներ ու հայ... մարշա՛լ...
Դարեր ի վեր
Մարմինը մեր,
Մարմինը մեր խեղճ ու տոկուն
Հիսուսի պես չարչարեցին,
Բայց քիչ էր դա.
Հասան հոգուն,
Նաև հոգուց մեզ զրկելու
Մի անհոգի ճար ճարեցին.
-Ո՛չ մի երգիչ՝ մեզ երգելու,
Մեր մահն անգամ ողբերգելու:
Ո՛չ մի երգիչ...
Եվ չարեցի՞ն:
Այն էլ ինչպե՜ս, ի՜նչ արեցին...
Բայց - ո՛վ հրաշք - պետք չէր մի դար,
Ոչ էլ կես դար, որպեսզի մենք
Ծնունդ տայինք մեր... Չարենցին,
Որ... չծնվեց մորից արդար
Եվ ուժ չառավ նրա կաթից,
Այլ... դուրս թռավ մեր հեքիաթից՝
Իբրև եղբայր մի արժանի
Սիամանթո-Վարուժանի,
Կրտսեր եղբայր, կրտսեր զավակ,
Որ պիտի գա և այն անի,
Ինչ չարեցին միջնեկ-ավագ...
Մենք՝ մատնված ջարդ ու գաղթի,

Անբախտներից անբախտ՝ կյանքում,
Բազմաստեղյան հոծ երկնքում
Մենք՝ զուրկ նույնիսկ աստղից բախտի,-
Հիմա փրկված չար ու անգութ
Սամում-խորշակ-ուրագանից,
Ողջ աշխարհին երեկ անհայտ
Մեր երկնասեր Բյուրականից
Ոչ թե անհայտ կամ դեռ հեռու
Աստղի ծինն ենք ազդարարում,
Այլև գտնում հազարաբյուր
Աստեղաբույլ -
Աստղասրփյուռ,-
Եվ գիտության հոգնած դեմքով
Անց է կենում թարմ մի զեփյուռ...
Նույն երկնի տակ, նորից այնտեղ՝
Արագածի ձնոտ լանջին,
Ուր չէր վառվել Լուսավորչի
Առասպելյա ոչ մի կանթեղ,
Վերին կամքով ոչ արարչի,
Այլ հայորդու
Մտքով արթուն
Փնջվում են արդ,
Դառնում կանթեղ
Կոսմիկական ճառագայթներ...
Դու մեր անթաղ, բայց և անփուտ,
Տրոփասիրտ մեր սուրբ մումիա,
Թեկուզ մարած, բայց վառվելիք
Մեր հոգու ջահ հազարմոմյա,
Դու չիմացար և որտեղի՞ց իմանայիր,
Թե Մասիսի սուրբ փեշերից

Մինչև լանջը Հիմալայի,
Անունովդ հպարտացող մի կվարտետ՝
Քեզ յուրովի կրկրնելով,
Քո հարկադիր կաշկանդումն է, որ կավարտեր՝
Սկիզբ տալով քո վերահաս արձակ կյանքին,
Հետզհետե ահագնացող անլռելի արձագանքին՝
Երկրից-երկիր,
Սրտերից-սիրտ,
Շուրթերից-շուրթ՝
Արևաշատ հայրենիքիդ երկնքից լուրթ
Մինչև Կարպատ ու լանջերը Հիմալայի...
Դու՝ երազկոտ, և չիմացար,
Ա՛խ, որտեղի՞ց իմանայիր.
Որ այն, ինչ քո ազգամեծար
Ու մեծ հոգով դո՛ւ կամեցար՝
Որպես երա՛զ, մտքի շշո՛ւնջ,
Պիտի մի օր ստանա շո՛ւնչ,
Ստանա ձև՛...
Դու չիմացար,
Եվ որտեղի՞ց իմանայիր:
Մինչդեռ հիմա, հիմա... Նայի՛ր...

ՂՈՂԱՆՋ ՄԱՐՄՆԱՎՈՐՎԱԾ ԵՐԱՋԻ

Քանի՛ աչիկներ, մանչուկնե՛ր քանի,
Քանի՛ նորատի, պարման-պատանի
Աչքները սևսաթ, դեմքերը սուտակ,
Ձեռքներին սրինգ, շեփոր ու ջութակ,
Դպրոցից գալիս - դպրոց են գնում՝
Պայուսակներում ու թևերի տակ

Քո երգ ու տաղի պրակները տաք...
-Դե ե՛կ, Վարդապե՛տ, եկ ու հավատա՛:
Որպես նորորակ հոյակապ տաճար
Եվ մեր պատմության ու մեր քերթության
Օջախ մի անշեջ ու սուրբ մի կաճառ,
Մատենադարա՛նն ահա, Խազագե՛տ,
Մի շենք փառակազմ ու հրաշակերտ,
Ամենապարփակ մի շտեմարան,
Որտեղ պահվում է հունձքը մեր հոգու՝
Մեսրոպյան տառի կնիքը վրան,
Եվ նրա կողքին՝ մեկ այլ շինություն
Անցուդարձողի ուշք ու միտք գերող.
Հայոց Առաջի՛ն Կոնսերվատորիան՝
Քո ամենասուրբ անունը կրող...
-Դե ե՛կ, Վարդապե՛տ, ու խոսքեր ճարիր...
Մկրտված ոգով քո սուրբ հանճարի՝
Քանի՛ երգչուհի, քանի՛ հայ երգիչ,
Եվ քանի՛- քանի՛ հայ երաժիշտներ՝
Քոյասիրահար ու քեզապաշտներ,
Ելած քո ազգի բեղուն ընդերքից՝
Բեմերի վրա համայն աշխարհի
Մեր տաղ ու պարի
Թովչանքն են ցրում,
Բուրմունքը փռում
Մեր բան ու բառի:
-Դե ե՛կ, Վարդապե՛տ, մի՛ ժպտա բարի...
Մեր երգի հունը լայնացընելով,
Համանվագի շարքեր ծնելով՝
Ճախրում են Նորքից մինչևիսկ Նյու-Յորք,
Սևանից մինչև գոռ Նիագարա

Քանի՜ երգաստեղծ ու նվագարար:
Ու նրանց ամեն նոր համերգի մեջ,
Ու նրանց իրե՛նց - և ամենքի՜ մեջ -
Դո՜ւ ես. հոր նման արյուն ես դարձել,
Փոխարկվել ջղի, նոր ձև ստացել:
Դո՜ւ ես, Նահապե՛տ, դու ես այն յան-ը,
Որ հայություն է հաղորդում նրանց
Իսկույն ճանաչվող հայ ազգանվանը.
Հայկական շունչն ու անտես այն ոգին,
Որ համակում է նրանց ամենքին,
Եվ որ աշխարհն է զգում-հասկանում,
Ինչպես Եվրոպա՛ն, այնպես էլ Ասիա՛ն.
Այն շունչն ազգային, մշտառկա ոգին,
Որ կյանքում նո՛ւյնպես ունի ազգանուն՝
Քո՜ անունը սուրբ, քո՞՝Կոմիտասյա՜ն...
-Դե ե՛կ, մահացա՜ծ, ու մի՛ համբառնա,
Դե արի՛, պանդո՜ւխտ, երկիր մի՛ դառնա...

ՂՈՂԱՆՋ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Ու վերադարձա՜վ...
Նրանից առաջ
Աշխարհասփյուռ - մազապուրծ հայեր,
Դիպվածն էր որոնց չար մահից պահել,
Որպեսզի հետո տա լաց ու հառաչ
Եվ - ի տրիտուր - իր հերթին տանջի՜,-
Աշխարհասփյուռ - մազապուրծ հայեր,
Կրկին հայրենի հողն էին դառնում,
Մարած շեների կրակը խառնում,
Որ ծուխը փնչի,

Երդիկը շնչի
Սեգ Մասիսների աչքի հանդիման,
Փեշերի վրա Արագածների՝
Ի հանգստություն բյուր ընկածների:
Վերադառնում էր, գալիս էր հիմա
Նա՝ անթաղ զոհը նույն առուփախի,
Խելաբորբոքը նույն սառ ու պաղի,
Մեր պար ու խաղի,
Մեր երգ ու տաղի,
Այն միակ հույսը և ապավենը,
Մեր հինն ու նորը իրար շաղկապող
Ծիածանակերպ այն ժապավենը,
Որ հատվեց մի օր դանակով չարի,
Եվ որին ահա քսա՛ն ձիգ տարի
Նախ՝ վերափոխման ակնկալիքով
Եվ ապա՝ տենչով հանգստանալու,
Սպասում էինք՝
Սիրով բանալու
Մեր վերքն՝ սպիով, ներկան՝ գալիքով.
-Գալուստի՛դ մեռնի քո կարոտ յարը
Ախպե՛ր ջան, արի՛, դե արի երթա՛նք...
Նա՝
Հեռագնաց մեր կարոտյալը,
Նա՝
Մինուճարը, զավակը մեր թանկ,
Նա՝
Հեգ պանդուխտը մեր քսանամյա,
Վերադառնում էր, գալիս էր հիմա.
-...Քո գալո՛ւն մեռնեմ,
...Կարո՛տը առնեմ...

Սև էր գնացել՝ բեղ մորուքը սև,
Վարդապետական սև սքեմ հագած:
Սև էր գնացել՝ եկավ ճերմակած...
-Ա՜խ, շատը կուլ տամ, գոնե քի՛չն ասեմ,
Անաստվա՛ծ աստված, բա քո ինչն ասեմ...
Գնացել էր նա,
Հիմա բերեցին.
Գնաց՝ սեփական ոտքերի վրա,
Իսկ հիմա նրան՝
Մեր տաղերեցին
Ահա բերեցին... ձեռքերի՜ վրա...
-Վա՜խ, մերդ մեռնի,
Ծաղկաթափ նռնի...
Գնաց այն պահին,
Երբ ահի՛,
Մահի՛
Շունչն էր մոլեգնում որպես չար խորշակ,
Երբ կուլ էր գնում ողջ ցեղը հայի,
Ու դեռ չէր փակվել մի գազանային
Մարդակերական անկուշտ ախորժակ,-
Երբ հիմա հեռվից դառնում էր նա տուն,
Մի տուն
Որ փրկված ամեհի հողմից՝
Շինվել էր կրկին և ամեն կողմից
Խաղողի վազով երեսն էր պատում:
-Գարուն է, արի՜,
Վա՜խ, քեզ ի՜նչ արին...
Ու վերադարձավ հողն իր հայրենի,
Որին առհավետ կորցրած կարծեց,
Եվ հենց ա՛յդ, հենց ա՜յդ միտքը վայրենի

Որդի պես նրա ուղեղը կրծեց...
Ու վերադարձավ Արարատներին,
Արագածներին իր քառակատար,
Իր հող ու ջրին՝ անարատներին,
Իր տաճարներին ու պալատներին,
Իր արտին, այգուն և արոտներին,-
Անցյալ,
Ապառնի,
Ու հարակատար
Բոլորանվեր ա՛յն կարոտներին,
Որ մնում էին հավետ անվտար,
Որ կիտվել էին քսանհի՜նգ տարի
Իր մթար սրտում,
Վթար մտքի մեջ՝
Ա՛յն դժբախտ օրից, երբ Մայր տաճարի
Գավիթը թողած, ցաված ու խռով
Նա գնաց Պոլիս
Եվ ապա... Փարիզ...
-Ա՜խ, գալըդ լիներ,
Գնա՛լ չլիներ...
Ու վերադարձավ մեր սուրբ հեռական...
Ահավոր մտքից ինքը խելագար՝
Չգիտեր թեկուզ, որ քսան տարում
Վառ ողողանջումը իր զնգուն զանգի
Արձագանքել էր խելագար թափով՝
Լացով հիացման,
Որոտուն ծափով
Ելել էր, հորդել և նոր մի ափով
Հասել, խառնըվել ուրիշ հոսանքի:
-Ումո՜ւդ ջան, նանին

Քո ցավը տանի...
Ու վերադարձավ,
Որ էլ չգնա՛,
Որ մրսած հոգին նորից տաքանա,
Ժողովրդական սիրո տաք օդով,
Որ, չիմանալով, դառնա սեգ կոթող՝
Ողորկ գրանիտ ու բրոնզ հագած,
Եվ այնտեղ... նրա հերքը ճերմակած
Առաջվա նման - ընդմի՛շտ - մգանա,
Հայացքի մուժը այնտեղ չքանա
Աչքերը փայլեն իրենց հին ցոլքով,
Ու նորից ցրեն
Ու փռեն
Չորս կողմ
Մարդեղացումը աստվածայնության,
Եվ սուրբ բերանի մնջախաղ-երգով,
Շարժումով ձեռքի
Կրկին տա դասեր՝
Դասեր մեներգի՛,
Բազմաձայնությա՛ն...
-Աչքերդ՝ պայծառ,
Բերանդ՝ տաճար...
Նա վերադարձավ.
Եվ ո՛ղջ մի երկիր,
Ժողովո՛ւրդ մի ողջ սրտով վշտառու
Ելավ հերթ ի հերթ,
Եկավ շար ի շար՝
Իր խաղ ու պարի, իր տաղ ու երգի
Կախարդիչ մոգին հրաժեշտ տալու...
-Իմ կանաչ արև,

Ի՜նչ մնաս բարև...

ՂՈՂԱՆՋ ՀՐԱԺԵՇՏԻ

Արագածի, Արարատի
Հայացքի դեմ սգավոր,
Սև տուֆակերտ մի պալատի
Տրտմահանդես դահլիճում
Պառկած էր նա՝
Որպես անթագ, բայց հիրավի թագավոր,
Որ ունի գահ,
Բայց ոչ երբեք իր սեգ գահից վարիչում:
Եվ գահազուրկ մի ժողովուրդ,
Որ, իբր արդար հատուցում,
Հեղափոխել մի ողջ աշխարհ
Ու ջարդել էր հին գահեր,
Հիմա ուրիշ մի արքայի
Ծով հարգանք է մատուցում,-
Ու փղձուկն են հազիվ պահել
Կին, տղամարդ, ծեր, ջահել:
Քարացել են ակնածանքից
Սև երիզով դրոշներ,
Հա՛յ պետական դրոշները,
Լսո՞ւմ ես դու, Վարդապե՛տ:
Եվ մի ամբողջ մայրաքաղա՛ք,
Մայրաքաղա՛ք, ո՛չ գաղութ,
Իր հոգու մեջ - վերջի՜ն անգամ -
Աշխատում է դրոշմել
Կերպարանքը քո սիրելի,
Քո դեմքը թանկ, որ թեպետ

Երգերիդ պես չի շողշողում,
Որ ցոլուն չէ ու ջղուտ,
Բայց գունատ է ո՛չ որբի պես,
Այլ մի արդար սրբի՛ պես...
Ու կանգնում են պատվո պահակ
Մասիս,
Սիփան,
Արագած՝
Ճերմակահեր գլուխն իրենց աճյունիդ դեմ վար հակած...
Ու կանգնում են պատվո պահակ
Հայոց պետեր,
Վարպետներ,
Հայ աշխարհի մեծերն ամեն,
Ամեն երեց ու ավագ...
Եվ քեզ ծնած մի ժողովուրդ՝
Հիմա դարձած քեզ զավակ,
Հրաժեշտի խոր տրտմությամբ միաժողով ու հավաք,
Կքված ցավից հայրակորույս,
Կիզված վշտի խոր տապից՝
Գալիս է լուռ, գալիս հերթով,
Որ հոգու մեջ խոր տպի
Մասունքներիդ սրբազան տեսքն ու դեմքը քո,
Դեմքը սուրբ..

ՂՈՂԱՆՋ ԹԱՂՄԱՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Թաղման թափորն անվերջ ձգվեց
Աբովյանից մինչև Պանթեոն,
Որտեղ արդեն, ամենից վաղ,
Հրազդանն էր նրան կոծում՝

Եղերամոր եղանակով:
Եվ մարդկային ծովի վրա հանդարտ ճոճվեց
Պսակներով առագաստված մի սուրբ նավակ...
Դարձել էին հուղարկավոր
Բազմահազար երևանցիք,
Եվ... ոչ միայն վերջին ու նոր մեր ոստանի
Բնակիչներն արտասվաթոր,
Եվ ո՛չ միայն մի ժողովուրդ,
Որ ապրում էր իր պետության սահմաններում,
Եվ ո՛չ միայն մի ժողովուրդ,
Որ փռված էր ողջ աշխարհի լայնքի վրա,
Այլև... բոլոր մեր զոհե՛րը միլիոնավոր,
Մեր բյուրավոր մեռելնե՛րը,
Որ մինչևիսկ չարժանացան... թաղման ծեսի,-
Բոլո՛ր նրանք, որոնց բախտից ահազարհուր
Կորավ և սա՛,
Սա՝ զոհը մեր ամենամե՛ծ...
Հայաստանյան լեռներն էին հուղարկավոր
Եվ գերեվար լեռները մեր՝ Կարսից-Զեյթուն...
Բուրվառում էր հայրենաշունչ բուրիչ քամին...
Զանգակաձայն իր դուստրերից
Նա՛, որ ուներ Հայկից առած անուշ անուն,
Շիրիմ կոչված այն փոսի մոտ,
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,
Անմարդկային լռության մեջ սկիզբ տվեց
Պահիպատշաճ Չինար ես-ին.
-Կեռանա՛լ մի...
Ու կեռացան-խոնարհվեցին բյուր գլուխներ...
Արցունք կաթեց պսակներին,
Լսվեց փղձուկ համատարած՝

Իբրև երգի մի յուրատիպ նվագակցում...
Եվ չէր ճարվի բոլորի մեջ մի անձ գոնե,
Որ ակամա և մեկուսի չմտածեր.
-«Չի՛ կեռանա».
Վկան, նաև առհավատչյան՝
Արարատն էր՝ երկնաձիգը,
Արագածն էր՝
Իր չորս անկոր կատարներով,
Ինչպես նաև այս երգը նույն,
Որ հայցում էր
-Հեռանա՞լ մի:
Հեռանում էր:
Բայց հեռանում
Ահավասիկ այս իրիկվա արևի պես,
Որ բնավ էլ մայր չի մտնում,
Այլ իր լույսով ողողելու
Ուրիշ ու նոր կողմեր գտնում:
Հեռանում էր:
Բայց հեռանում, որ մոտիկից հեռանալով՝
Հեռուներում լայն ծավալվի ու տարածվի,
Որ կիսատը նոր լրացվի
Եվ տարածված ու լրացված՝
Երբևիցե չմոռացվի:
Եվ իզո՞ւր էր երգը խընդրում.
-Մոռանա՛լ մի...
...Երբ սկսեց աճյունն իջնել
Շիրիմ կոչված այն փոսի մեջ,
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,
Նույն այդ պահին հայ երկնքից
Հանկարծակի անձրև՞ տեղաց.

Զարմանալի զուգադիպո՞ւմ.
Թե՞ իսկապես երկինքն անգամ
Ողբում էր քեզ՝
Խաղա՛ղ-տրտո՛ւմ-հանգըստարա՛ր իր անձրևով...
...Երբ սկսեց աճյունն իջնել
Շիրիմ կոչված այն փոսի մեջ,
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,
Այդ վայրկյանին ո՞վ չլսեց,
Որ բովանդակ աշխարհով մեկ
Փռված բոլոր եկեղեցիք հայահավատ
Իրենց բոլոր զանգակներով ու զանգերով
Դեպի երկինք ղողանջեցին.
-Դոներըդ բա՛ց...
Եվ հայկական տաճարների բյուր բեմերից
Կոմիտասյան Պատարագ-ով
Ժամերգեցին քե՛զ, Կոմիտա՛ս:
-Երբեմն էի լոյս, և այժըմ
Խավար եմ և ստվեր մահու...
Ո՛չ, այս անգամ սխալվեցի՛ր, պատարագի՛չ,
Նա լույս էր վառ ու լույս է արդ,
Ու կմնա միշտ լույս զվարթ,
Լույս՝ աչքերում հայ մանուկի,
Լույս՝ մտքի մեջ հայ պարմանու,
Հայ հարսների պտղած ծոցում,
Հայ թոռնօրոր նանիների
Ինքնամոռաց ժպիտի մեջ,-
Հայ այրերի ու հայ կանանց
Ջերմ սրտերում սիրատրրոփ:
Քեզ, Վարդապե՛տ,
Անփուտ հողին ի պահ տալիս

Իզո՜ւր էին պատարագում թաղման երգով.
-Ի վերինըն Երուսաղեմ...
Ո՛չ թե թաղման երգն էր պատշաճ,
Այլ հարության վառ մեղեդի՜ն.
-Փառք ի բարձո՜ւնս...
Օրհնեա՛լ ես դու...
Օրհնյա՜լ ես դու,
Եվ չես թաղվում ու հող դառնում,
Այլ թաղվելիս հարությո՜ւն ես կրկին առնում...
-Օրհնեա՛լ ես դու.
Գա՜ռն աստուծոյ...
Ա՜խ, գա՛ռն արդար, որ զոհ գնաց
Եվ անդանա՜կ զոհվեց չարին՝
Արհավիրքի այն սև տարին,
Երբ հայ երկրում հայ չմնաց...
-Ելն ի բարձունս... էառ աւար,
Բաշխեալ պարգևս... որդւոց մարդկան...
Պարգև բաշխեց
Որդիներին իր տարաբախտ ժողովրդի
Եվ... մարդկությա՜ն:
Պարգև բաշխեց
Աստծո՛ նման՝ շռայլորե՜ն,
Եվ բաշխելով՝ հարստացա՛վ...
-Գովե՛մք զքեզ,
Բարեբանե՜մք...
Բայց դրվատման ի՞նչ խոսքերով
Բարեբանենք և քեզ գովենք,
Թե աղքատ է հանկարծ թվում
Բառարանը մեր հայկազյան:
Ի՞նչ խոսքերով բարեբանենք

Քե՛զ, Վարդապե՛տ...

.....

Դո՛ւ - Վարդապե՞տ:

Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,

Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,

Գիրն ու տառն ես Հայոց երգի:

Հայոց երգի

Անծիր հերկի

Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,

Ե՛վ մատնընտիր սերմը նրա,

Ե՛վ խոստումը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն ես,

Որ ինչքան էլ ճղակոտոր՝

Շտկըվել է ու բար տվել,

Ու... մեր դարդը իրար տվել...

Եվ հայրենի այն ծիծառը,

Որ հավիտյան բույն է դրել

Մեր հոգու մեջ,

Մեր կիսավեր ու դեռ կանգուն տաճարների

Ու մեր երկնի գմբեթի տակ...

Դու՝ մեր տավիղ,

Եվ քո լարը

Մինչև անգամ և հատվելիս

Հայերեն է նորից ճնգում:

Դու՝ մեր սրտի ձայնալարը,

Մինչև անգամ վհատվելիս

Հայերեն ես դարձյալ տնքում...

Դու ես քարը

Եվ սրբատաշ մեր պատշարը.

Հացը օրվա

Եվ նեղ ժամի մեր պաշարը.
Մեր փակ հոգին, բաց աշխարհը,
Սրբագործված մեր նշխարը.
Եվ մեր ճարը՝
Օտարամուտ ախտի դիմաց.
Խնկածավալ մեր տաճարը՝
Օտարահոտ աղտի դիմաց.
Վերադարձի մեր պատճառը՝
Մեր հարկադիր գաղթի դիմաց.
Համահավաք մեր հանճարը՝
Ազգասրփյուռ բախտի դիմաց...
Դու մեր հաստատ Մասիս սարը՝
Վստահելի թիկունքն ես մեր,
Մեր երգերի Ծովասարը
Ու բյուրակյան ակունքն ես մեր,
Մեր արնոտված հավքի լեզուն,
Մեր կարոտած ֆիդան յարը,
Մեր լեփլեցուն հոգիների ձայնատարը,
Մեր երգերի խա՛զը-նոտա՛ն-ձայնատա՛ռը,
Ձայնասրփյո՛ւռը կենդանի
Ու ձայների թանգարա՛նը,-
Մեր հայկական երգարա՛նը...
Արտը մեզնից՝ դու ես մաճկալ,
Հարդը մեզնից՝ ցորենը դու,
Հարթը մեզնից՝ կատար դու սեգ.
Լուրթը մեզնից՝ երկինքը դու,
Շուրթը մեզնից՝ դու համբույրը,
Ցուրտը մեզնից՝ իսկ դու՝ կրակ,
Իսկ դու՝ օջախ,
Իսկ դու՝ թոնիր...

Եվ մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչբո՛ւռը,
Այս խաչբուռը՝ քո՛ իսկ հերկի:
Ընդունիր դո՛ւ, դո՛ւ՝ մեր երգի
Մշտահնչուն նվագարան.
Ընդունիր դո՛ւ՝ մեր ցաքուցիր
Մասունքների հավաքարա՛ր.
Դու՝ խազերի մեր քերական,
Դու՝ հոգևոր մեր շարական.
Դու՝ սրբազան մի ավազան,
Որ մեր հոգին ախտահանեց.
Դու՝ բիբլիական մի գավազան,
Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց.
Դու մեր կարոտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարթուն,
Անլռելի զանգակատո՛ւն...
11.IX.1957թ.-28.XI.1958թ.
Մոսկվա